ՏԵՂԵԿԱՆՔ

(ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-267-Ն որոշման հավելվածի 25-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված պահանջներին համապատասխան)

«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում չափումների միասնականության ապահովման ~~իրավական հիմքերը, չափումների միասնականության ապահովման բնագավառում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հարաբերությունները և ուղղված է չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, տնտեսության զարգացմանը և գիտատեխնիկական առաջընթացին:~~ ոլորտում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի իրավահարաբերությունները, չափումների, մեծությունների չափման միավորների, չափանմուշի (էտալոն), ստանդարտ նմուշի, չափման միջոցի նկատմամբ և դրանց պահպանմանը ներկայացվող պահանջները, ստանդարտ նմուշի, չափման միջոցի, չափման մեթոդիկայի (մեթոդի) կիրառմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև չափումների միասնականության ապահովման ոլորտին (այսուհետ՝ չափագիտության) առնչվող (ներառյալ աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը) հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործված են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ~~**ազգային չափանմուշ (ազգային էտալոն)՝** չափանմուշ, որը չափագիտության ազգային մարմնի որոշմամբ ճանաչվել է որպես ելակետային Հայաստանի Հանրապետության տարածքում~~.

1) **ազգային չափանմուշ (ազգային էտալոն)՝** չափանմուշ, որը չափագիտության լիազոր մարմնի կողմից ճանաչվել է որպես հիմք և օգտագործվում է պետության կամ տնտեսության մեջ տվյալ տեսակի մեծության այլ չափանմուշներին արժեք վերագրելու համար;

2) **աշխատանքային չափանմուշ (աշխատանքային էտալոն)՝** չափանմուշ, ~~որն~~ որը կանոնավոր կերպով օգտագործվում է չափման միջոցների կամ չափիչ համակարգերի տրամաչափարկման կամ ստուգաչափման համար, ինչպես նաև չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից չափման միջոցի

չափագիտական կանոններին ու նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս).

3) ~~**չափանմուշ (էտալոն)՝** նյութական չափ, չափման միջոց, ստանդարտ նմուշ կամ չափողական համակարգ, որը նախատեսված է համապատասխան անորոշությամբ արժեքի կամ միավորի վերարտադրման, սահմանման, պահպանման և այլ չափման միջոցներին փոխանցման համար.~~

3) **չափանմուշ (էտալոն)՝** տվյալ մեծության սահմանման նյութականացում՝ մեծության հաստատված (որոշված) արժեքով և չափման անորոշությամբ, օգտագործվում է որպես ելակետ։

~~4) **հետևելիության շղթա՝** չափման միջոցներին չափանմուշային միավորների արժեքների փոխանցման շղթա, որում ներկայացված են միավորների արժեքների փոխանցման հերթականությունը և անորոշությունների համեմատությունը.~~

4) **չափագիտական հետևելիության շղթա (հետևելիության շղթա)՝** չափանմուշների և տրամաչափարկումների հաջորդականության շղթա, որն օգտագործվում է չափման արդյունքը չափանմուշի հետ փոխկապակցելու համար.

4 .1) **չափագիտական հետևելիություն՝** չափման արդյունքի հատկություն, որի համաձայն արդյունքը կարող է հարաբերակցվել համեմատության հիմքի հետ' փաստաթղթավորված շարունակական անխախտ տրամաչափարկման շղթայի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներդրում ունի չափումների անորոշության մեջ.

~~5) **չափագիտական ապահովում՝** օրենսդրական չափագիտության բնագավառում չափման արդյունքների հավաստիության ապահովման համար կիրառվող անհրաժեշտ գործողությունները, տեխնիկական միջոցները և կարգերը.~~

6) **չափագիտություն՝** գիտություն չափումների և դրանց կիրառման մասին.

7) **չափագիտության լիազոր մարմին՝** ~~կառավարության լիազորած պետական կառավարման մարմին~~ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմին, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է չափումների միասնականության ապահովման պետական կառավարում.

8) ***(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-235-Ն)***

9) **չափման միջոց՝** ~~չափում կատարելու համար նախատեսված սարք, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ.~~

սարք, որն օգտագործվում է չափումներ կատարելու համար, առանձին կամ մեկ կամ մի քանի օժանդակ սարքերի հետ միասին։

9 .1) **սոցիալական և տնտեսական նշանակություն ունեցող չափման միջոց՝** չափման միջոց, որի չափագիտական բնութագրերը, թույլատրելի առավելագույն սխալանքները և ճշտությունը սահմանվում է չափագիտության ոլորտի լիազոր մարմնի կողմից.

~~10) **չափման միջոցների տրամաչափարկում (կալիբրավորում)՝** գործողությունների ամբողջություն, որի միջոցով որոշակի պայմաններում որոշվում է տրամաչափարկվող չափման միջոցների չափվող արժեքների բաշխման տիրույթն աշխատանքային չափանմուշների կամ չափանմուշային չափման միջոցների համեմատությամբ.~~

10) **չափման միջոցի տրամաչափարկում (կալիբրավորում)՝** գործողություն, որը տրված պայմաններում առաջին փուլում սահմանում է կապը մեծության արժեքների ու համապատասխան ցուցմունքների՝ վերաբերելի (համապատասխան) չափումների անորոշություններով, և չափանմուշներից ստացված չափման անորոշությունների միջև, իսկ

երկրորդ փուլում այդ տեղեկությունն օգտագործվում է ցուցմունքից չափման արդյունք ստանալու կապը սահմանելու համար։

~~11) **չափման միջոցների ստուգաչափում՝** գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է սահմանված պահանջները: Չափման միջոցների ստուգաչափումը լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր.~~

11) **չափման միջոցի ստուգաչափում՝** գործողությունների ամբողջություն, որն ապահովում է օբյեկտիվ տվյալներ այն մասին, որ չափման միջոցը բավարարում է կամ չի բավարարում սահմանված չափագիտական պահանջներին և արդյունքում տրամադրվում է չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքը հավաստող փաստաթուղթ.

11 .1) **չափման միջոցի ստուգաչափման դրական կամ բացասական արդյունքները հավաստող փաստաթուղթ՝** վկայական, QR կոդ (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկեր, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմ, նշան կամ նշանների համակցություն, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են, որ կատարվել է չափման միջոցի ստուգաչափում և հաստատվել է դրա համապատասխանությունը սահմանված պահանջներին կամ ծանուցագիր, ստուգաչափման դրոշմի արտատիպի մարման պատկեր, որոնք առանձին կամ համատեղ կիրառմամբ հավաստում են անհամապատասխանությունը սահմանված պահանջներին .

11.2) **չափման միջոցի ստուգաչափման դրոշմի մարում՝** չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի չեղարկում չափման միջոցի օրենսդրական պահանջներին այլևս չհամապատասխանելու դեպքում.

~~12) **չափման միջոցների փորձաքննություն՝** չափման միջոցների ստուգաչափում, որն իրականացվում է դատարանի, դատախազության, արբիտրաժի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի, սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով.~~

~~13) **չափում՝** մեծության արժեքի որոշման նպատակով իրականացվող գործողությունների ամբողջություն.~~

12) **չափման միջոցի փորձաքննություն՝** դատարանի, դատախազության, արբիտրաժի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի, սպառողների կամ նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով իրականացվող չափման միջոցի ստուգաչափում, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների չափագիտական բնութագրերի որոշում.

13) **չափում՝** փորձարարական գործընթացով մեկ կամ մի քանի մեծությունների արժեքների ստացում, որոնք կարելի է վերագրել մեծությանը.

14) **չափումների միասնականություն՝** չափումների այնպիսի վիճակ, որի արդյունքներն արտահայտված են մեծությունների ընդունված միավորներով, իսկ չափումների առավելագույն թույլատրելի սխալանքը հայտնի հավանականությամբ դուրս չի գալիս սահմանված տիրույթից.

15) **ստանդարտ նմուշ՝** ~~չափ, որն օգտագործվում է չափման միջոցների ստուգաչափման, տրամաչափարկման, ճշտության գնահատման, ինչպես նաև նյութերի բաղադրության, հատկությունների տեխնիկական բնութագրերը բնորոշող մեծությունների արժեքների որոշման ժամանակ.~~ հատկորոշված բնութագրերի նկատմամբ բավարար համասեռ ու կայուն նյութ, որը ճանաչվել է պիտանի չափումների կամ անվանական բնութագրերի ուսումնասիրության ժամանակ.

16) **տեսակի հաստատման սերտիֆիկատ՝** փաստաթուղթ, որը հավաստում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատված լինելը.

16 .1) **տեսակի հաստատում՝** իրավական նշանակություն ունեցող որոշում՝ հիմնված տեսակի գնահատման ուսումնասիրության վրա, առ այն, որ չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակը համապատասխանում է օրենքով սահմանված համապատասխան պահանջներին և որի արդյունքում տրվում է տեսակի հաստատման սերտիֆիկատ.

16.2) **տեսակի հաստատման ճանաչում՝** կողմի (չափագիտության ազգային մարմին) կայացրած որոշում, կամավոր կամ երկկողմ կամ բազմակողմ պայմանավորվածության հիման վրա, որով մյուս կողմի (այլ երկրի չափագիտության ազգային մարմնի) կողմից հաստատված տեսակը ճանաչվում է որպես օրենսդրական պահանջներին համապատասխանող, նոր տեսակի հաստատման սերտիֆիկատի տրամադրմամբ.

17) **օրենսդրական չափագիտություն՝** չափագիտության մաս, որը ներառում է գործունեության այն տեսակները, որոնց վրա տարածվում են օրենսդրությամբ սահմանված պահանջներ չափումների, չափման միավորների, չափման միջոցների և չափման մեթոդների վերաբերյալ.

18) **օրենսդրական չափագիտական հսկողություն՝** չափման միջոցների տեսակի հաստատում, չափման միջոցների նախնական և հետագա ստուգաչափում, ~~չափագիտական հսկողություն և~~ փորձաքննություն.

18.1) **չափագիտական վերահսկողություն՝** ~~չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով և այլ~~ սույն օրենքով և ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների կանխարգելման, բացահայտման և վերացման նպատակով տեսակը չհաստատված, չստուգաչափված, տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման ~~միջոցների շուկայահանման և (կամ) շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների~~ միջոցի շուկայահանման և շահագործման, չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների (մեթոդների) առկայության, չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանմանն ուղղված վերահսկողություն.

18.2) **չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին՝** Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին (այսուհետ՝ տեսչական մարմին)

~~19) **գիտական պահապաններ՝** ազգային չափանմուշների պահպանման համար պատասխանատու անձինք:~~

20) **չափման մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մոդելի վրա հիմնված մեկ կամ մի քանի չափման սկզբունքների և տվյալ չափման մեթոդիկայի (մեթոդի) համաձայն չափման մանրամասն նկարագրություն, որն իր մեջ ներառում է չափման արդյունքը ստանալու համար յուրաքանչյուր հաշվարկ.

21) **չափման ռեֆերենս մեթոդիկա (մեթոդ)՝** չափման մեթոդիկա (մեթոդ), որը նույն տեսակի մեծությունների չափման այլ մեթոդիկաներից (մեթոդներից) ստացված չափվող մեծության արժեքների չափման ճշտությունը գնահատելիս, տրամաչափարկելիս կամ ստանդարտ նմուշների բնութագրերը որոշելիս ընդունված է որպես ըստ նշանակության օգտագործման համար պիտանի չափման արդյունքներ տրամադրող

22) **չափման մեթոդիկայի (մեթոդ) վկայագրում՝** չափումների մեթոդիկայի (մեթոդի) հետազոտություն և հավաստում, որ այն համապատասխանում է չափումների նկատմամբ սահմանված չափագիտական պահանջներին.

23) **չափագիտական վկայագրում՝** իր կազմում մեկից ավելի չափիչ սարք ունեցող կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ աշխատող չափման միջոցների համալիրների ստուգաչափում.

24) **շուկայահանում՝** չափման միջոցը կամ չափածրարված արտադրանքն առաջին անգամ շուկայահանելը.

25) **կապարակնքում՝** չափման միջոցը փոփոխությունից, վերակարգավորումից, մասերի հեռացնելուց, ծրագրային ապահովմանը միջամտելուց և այլ ցանկացած չարտոնված գործողություններից պաշտպանելու կամ չափման միջոցի շահագործումն արգելելու համար նախատեսված միջոց

26**) չափածրարված արտադրանք՝** առանց գնորդի ներկայության փաթեթավորված և շուկայահանված արտադրանք, որի պարունակությունն ունի նախասահմանված արժեք և այն հնարավոր չէ փոխել առանց փաթեթը բացելու կամ զգալի փոփոխությունների ենթարկելու.

27**) չափագիտության խորհուրդ՝** չափագիտության ազգային մարմնին աջակցող խորհրդատվական խորհուրդ.

28) **միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ՝** մեծությունների միջազգային համակարգի միավորների վրա հիմնված, Կշռի և չափի գերագույն համաժողովի (ԿՉԳՀ/CGPM) կողմից ընդունված միավորների համակարգ, դրանց անվանումները և պայմանանշանները, ներառյալ նախածանցների շարքերը, անվանումները և պայմանանշանները՝ օգտագործման կանոնների հետ միասին.

2 . Սույն օրենքում չսահմանված հասկացությունները ունեն Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության «Օրենսդրական չափագիտության եզրույթների միջազգային բառարան» ՕԻՄԼ Հ 1 (OIML V 1) և «Չափագիտության միջազգային բառարան. Հիմնական և ընդհանուր հայեցակարգեր ու հարակից եզրույթներ» ՕԻՄԼ Բ2 (OIML V 2) բառարաններով սահմանված հասկացությունների իմաստը:

(2-րդ հոդվածը փոփ. 30.04.13 ՀՕ-42-Ն, 17.12.14 ՀՕ-235-Ն, լրաց. 26.05.21 ՀՕ-230-Ն)

~~Հոդված 3.~~ ~~Չափումների միասնականության ապահովման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը~~

-

~~1. Հայաստանի Հանրապետության չափագիտության և չափումների միասնականության ապահովման բնագավառում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով։~~

~~2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը։~~

~~Գ Լ ՈՒ Խ 2~~

-

~~ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ, ՉԱՓԱՆՄՈՒՇՆԵՐԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՈՒՄԸ~~

Գ Լ ՈՒ Խ 2

ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ, ԱԶԳԱՅԻՆ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԱՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻՆ, ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻՆ, ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻՆ (ՄԵԹՈԴԻՆ), ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ, ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

~~Հոդված 4.~~ ~~Մեծությունների միավորները~~

-

~~1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են Չափի և կշռի միջազգային համաժողովի կողմից ընդունված և Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության կողմից երաշխավորված միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի մեծությունների միավորները և չափումների սանդղակները։~~

~~2. Սույն հոդվածի առաջին մասով երաշխավորված մեծությունների միավորների հետ համահավասար կարող են կիրառվել մեծությունների արտահամակարգային միավորները՝ հարաբերակցված միջազգային համակարգի միավորների հետ։~~

~~3. Հայաստանի Հանրապետությունում կարող են կիրառվել համընդհանուր ընդունված հատուկ միավորներ, որոնք անհրաժեշտ են՝~~

~~1) միջազգային առևտրի համար.~~

~~2) օդային և ծովային նավագնացության, առողջապահության, ռազմական նպատակների և անվտանգության համար։~~

~~4. Մեծությունների միավորների, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևը և կիրառման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։~~

~~5. Առևտրում, գովազդում, հրատարակություններում, դասագրքերում արգելվում է կիրառել թույլատրված միավորներից տարբեր միավորներ։~~

Հոդված 4. Մեծությունների չափման միավորներին ներկայացվող պահանջները

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են Չափի և կշռի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) և Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության (ՕՉՄԿ/OIML) կողմից ընդունված միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի մեծությունների չափման միավորները և չափումների սանդղակները, որոնց հետ համահավասար կարող են կիրառվել մեծությունների արտահամակարգային միավորները՝ հարաբերված միջազգային համակարգի միավորների հետ:

2. Արտահանվող արտադրանքի, այդ թվում՝ չափման միջոցի բնութագրերը և չափորոշիչները կարող են արտահայտվել պատվիրատուի հետ կնքված պայմանագրով նախատեսված մեծությունների չափման միավորներով:

3. Հայաստանի Հանրապետությունում կարող են կիրառվել համընդհանուր ընդունված հատուկ միավորներ, որոնք անհրաժեշտ են՝

1) միջազգային առևտրի համար.

2) օդային և ծովային նավագնացության, առողջապահության, ռազմական նպատակների և անվտանգության համար:

4. Առևտրում, գովազդում, հրապարակումներում, դասագրքերում արգելվում է կիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ սույն հոդվածի 1-ին մասով երաշխավորված մեծությունների չափման միավորներից տարբեր միավորներ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հրապարակումներում և ուսուցման ժամանակ հիշատակվում են պատմականորեն օրենքով չսահմանված միավորներ.

2) փաստաթղթերը կամ հրապարակումները նախատեսված են միավորների տարբեր համակարգեր ունեցող երկրների օգտագործողների համար .

3) եթե երաշխավորված միավորներից տարբեր միավորների հետ համատեղ նշված է դրանց համարժեք երաշխավորված միավորների արժեքները:

~~**Հոդված 5. Չափանմուշներ**~~

-

~~1. Ազգային չափանմուշների համակարգը ստեղծվում է կիրառման թույլատրված միավորների պահպանման, տարածման և տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով:~~

~~2. Մեծությունների միավորները, ազգային և աշխատանքային չափանմուշները չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի տեխնիկական հիմքն են: Դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիսանում են ելակետային և նախատեսված են մեծությունների միավորների չափերի վերարտադրման և պահպանման համար, ինչպես նաև տվյալ մեծությունների աշխատանքային չափման միջոցներին դրանց չափի փոխանցման համար:~~

~~3. Ազգային չափանմուշները պահպանվում են Չափագիտության ազգային մարմնի գիտական պահապանների կողմից:~~

~~4. Չափման միջոցը որպես ազգային չափանմուշ ճանաչվում է Չափագիտության ազգային մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~5. Ազգային չափանմուշները պետության սեփականությունն են:~~

Հոդված 5. Ազգային և աշխատանքային չափանմուշներին ներկայացվող պահանջները

1. Ազգային չափանմուշների համակարգը ստեղծվում է կիրառման երաշխավորված միավորների պահպանման, տարածման և տնտեսության պահանջարկը բավարարելու նպատակով և բաղկացած է չափագիտության ազգային մարմնի և այլ կազմակերպությունների չափանմուշներից:

2. Ազգային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգին, միջազգային համատեղելիություն և ճանաչում: Ազգային չափանմուշների չափագիտական հետևելիության ապահովման պատասխանատվությունը կրում է չափանմուշ պահպանող կառույցը:

3. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող աշխատանքային չափանմուշները պետք է ապահովեն չափագիտական հետևելիություն միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգի հետևելի չափանմուշներին:

4. Ազգային չափանմուշի պահպանման և կիրառման կանոններին հետևելն իրականացվում են այն կառույցներում, որտեղ պահվում են չափանմուշը:

Հոդված 6. Չափման ~~միջոցները~~ միջոցներին ներկայացվող պահանջները

~~1. Չափման միջոցները նախատեսված են կիրառման թույլատրված միավորներով արտահայտված մեծությունների արժեքը որոշելու համար:~~

2. Չափման միջոցների չափագիտական բնութագրերը, ինչպես նաև տվյալ չափման միջոցներին ներկայացվող շահագործման պահանջները սահմանվում են տվյալ չափման միջոցն արտադրողի կողմից:

~~3. Օրենսդրական չափագիտության ենթակա ոլորտներում կիրառվող չափման միջոցները պետք է համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված պահանջներին:~~

3 Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում տեսակը չհաստատված և ստուգաչափում չանցած չափման միջոցի կիրառումն արգելվում է:

Հոդված 7. Ստանդարտ ~~նմուշները~~ նմուշին ներկայացվող պահանջները

1. Օրենսդրական չափագիտության ոլորտներում կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են տեսակի հաստատման, եթե չունի չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ:

~~2. Տրամաչափարկման ժամանակ կիրառվող ստանդարտ նմուշները ենթակա են վկայագրման՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:~~

2 . Ստանդարտ նմուշը նախատեսված է նյութերի բաղադրության կամ հատկությունների բնութագրերը վերարտադրելու, պահելու և փոխանցելու համար՝ Հայաստանի

Հանրապետությունում օգտագործման համար հաստատված մեծությունների միավորների արժեքներով:

Հոդված 8. Չափումների կատարման ~~մեթոդիկաները~~ մեթոդիկային (մեթոդին) ներկայացվող պահանջները

~~1. Չափումների կատարման մեթոդիկան, այդ թվում՝ էտալոնային մեթոդիկան, փաստաթուղթ է, որով սահմանվում են չափումների կատարման նախապատրաստման կանոնները, չափման մեթոդը, տեխնիկական միջոցները, ինչպես նաև չափման արդյունքի մշակման և հաշվարկման կարգը:~~

1. Չափման մեթոդիկան (մեթոդը) ներառում է չափումների կատարման նախապատրաստման կանոնները, չափման գործընթացը, տեխնիկական միջոցները, ինչպես նաև չափման արդյունքի մշակման և հաշվարկման կարգը:

2. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում կիրառվող չափումների կատարման մեթոդիկաները ենթակա են չափագիտական վկայագրման, եթե միջազգայնորեն ճանաչված չեն:

3. Չափման մեթոդիկան (մեթոդ), այդ թվում ռեֆերենս մեթոդիկան (մեթոդը) հատուկ նկարագրված գործողությունների ամբողջություն է, որի իրականացումն ապահովում է չափման արդյունքների ստացումը ճշգրտության սահմանված ցուցանիշներով:

(8-րդ հոդվածը փոփ. 17.12.14 ՀՕ-235-Ն)

~~**Հոդված 9. Չափման միջոցների տրամաչափարկումը**~~

~~1. Տրամաչափարկումն իրականացվում է չափանմուշների համեմատությամբ տրամաչափարկվող չափման միջոցների չափվող արժեքների բաշխման տիրույթը որոշելու նպատակով:~~

~~2. Օրենսդրական չափագիտության ոլորտներում չկիրառվող չափման միջոցները կարող են ենթարկվել տրամաչափարկման:~~

~~3. Չափման միջոցների տրամաչափարկում կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:~~

Հոդված 9.1. Չափման միջոցի տեսակի հաստատմանը ներկայացվող պահանջները

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են տեսակի հաստատման:

2. Չափման միջոցի տեսակի հաստատված լինելը հավաստվում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատով, որի ձևը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը:

3. Չափման միջոցի տեսակի հաստատումն իրականացնում է չափագիտության ազգային մարմինը:

Հոդված 9.2. Չափման միջոցի ստուգաչափմանը ներկայացվող պահանջները

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում ներառված չափման միջոցները ենթակա են ստուգաչափման:
2. Չափման միջոցի ստուգաչափումը, որի կազմակերպման և իրականացման կարգը սահմանվում է լիազոր մարմնի կողմից, լինում է ընտրանքային, առաջնային, կրկնակի, պարտադիր պարբերաբար կատարվող և կամավոր:
3. Չափման միջոցի ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են վկայագրման՝ որպես ստուգաչափող:
4. Չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են ստուգաչափումն իրականացնող կազմակերպության կողմից ստուգաչափման դրական արդյունքները հավաստող համապատասխան փաստաթղթի տրամադրմամբ, ըստ անհրաժեշտության կապարակնքելով չափման միջոցը:
5. Չափման միջոցի ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում (չեղարկում) է ստուգաչափման դրոշմի արտատիպը՝ համաձայն չափագիտության լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի և առձեռն կամ էլեկտրոնային փոստով ներկայացնում է չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին ծանուցագիր:
6. Չափման միջոցի ստուգաչափման դրոշմը համարվում է անվավեր, եթե այն վնասված է:
7. Չափման միջոցի ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք: Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի չափման միջոցի ստուգաչափումն իրականացվում է չափագիտության ազգային մարմնի կողմից:

Հոդված 9.3. Օրենսդրական չափագիտության գործառույթները

1. Օրենսդրական չափագիտության գործառույթներն են՝
1) չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատումը.
2) չափման միջոցի ստուգաչափումը և չափագիտական վկայագրումը.
3) չափումների կատարման մեթոդիկայի (մեթոդի) վկայագրումը.
4) չափման միջոցների փորձաքննությունը:

Գ Լ ՈՒ Խ 3

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

~~**Հոդված 10. Չափումների միասնականության ապահովման պետական կառավարումը**~~

-

~~1. Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական չափագիտության ոլորտներում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը:~~

~~2. Չափագիտության լիազոր մարմինը՝~~

~~1) մշակում և համակարգում է պետական քաղաքականության իրականացումն օրենսդրական չափագիտության ոլորտներում.~~

~~2) համակարգում է Չափագիտության ազգային մարմնի գործունեությունը.~~

~~3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններում.~~

~~4) սահմանում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևը, չափման միջոցի տեսակի հաստատման նշանի պատկերը.~~

~~5) սահմանում է չափման միջոցի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը.~~

~~6) սահմանում է չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերը.~~

~~7) *(կետն ուժը կորցրել է 26.05.21 ՀՕ-230-Ն)*~~

~~7.1) իրականացնում է Չափագիտության ազգային մարմնի գործունեության մշտադիտարկում.~~

~~8) *(կետն ուժը կորցրել է 26.05.21 ՀՕ-230-Ն)*~~

~~9) ընդունում և գործողության մեջ է դնում Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և Չափի և կշռի միջազգային համաժողովի ուղեցույցները:~~

~~*(10-րդ հոդվածը լրաց., փոփ. 26.05.21 ՀՕ-230-Ն)*~~

Հոդված 10. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները չափագիտության ոլորտում

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) սահմանում է սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցներին ներկայացվող պահանջները.

2) սահմանում է մեծությունների միավորի, չափումների սանդղակների հայերեն անվանումը, նշագրումը, գրելաձևը և կիրառման կանոնները.

3) սահմանում է չափանմուշը որպես ազգային չափանմուշ ճանաչելու, պահպանելու, կատարելագործելու և դրա ճանաչումը դադարեցնելու մասին կարգը.

4) սահմանում է չափածրարված արտադրանքին ներկայացվող չափագիտական պահանջները .

5) սահմանում է որպես չափիչ անոթ օգտագործվող շշերին ներկայացվող չափագիտական պահանջները .

6) սահմանում է ոչ ավտոմատ գործողության կշռող սարքերին ներկայացվող պահանջները .

7) սահմանում է օրենսդրական չափագիտության տարածման ոլորտները և դրանցում կիրառվող չափման միջոցների ցանկը .

8) սահմանում է օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցի ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի կողմից Չափագիտության ազգային մարմնին և չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին տեղեկատվություն տրամադրելու կարգը:

Հոդված 10.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման համակարգի մարմինը

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափումների միասնականության ապահովման պետական կառավարումն իրականացնում է չափագիտության լիազոր մարմինը:

2. Չափագիտության լիազոր մարմինը՝

1) մշակում և համակարգում է պետական քաղաքականության իրականացումն օրենսդրական չափագիտության ոլորտում.

2) համակարգում է չափագիտության ազգային մարմնի գործունեությունը.

3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային կազմակերպություններում.

4) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության սահմանած ուղեցույցների հիման վրա, տեսակի հաստատման համար ներկայացվող հայտի, չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևերը, տեսակի հաստատման նշանի պատկերը.

5) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցների ստուգաչափման պարբերականությունը .

6) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը.

7) սահմանում է չափման միջոցի ստուգաչափման, փորձաքննության կազմակերպման և իրականացման կարգը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ուղեցույցների հիման վրա, չափման միջոցի ստուգաչափման համար ներկայացվող հայտի ձևը, ստուգաչափման վկայականի ձևը, որը կարող է լինել QR կոդի տեսքով (արագ արձագանքման կոդ, որը պարունակում է նույն տեղեկատվությունն, ինչ վկայականը կամ ինքնակպչուն դրոշմը), ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերը, դրոշմի արտատիպի մարման պատկերը, բարձր պաշտպանվածության համարակալված ինքնակպչուն դրոշմի արտատիպի պատկերը, չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու ընթացակարգը և ծանուցագրի ձևը.

8) սահմանում է չափագիտության կառավարման խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը.

9) ճանաչում է ազգային չափանմուշը, հաստատում է կատարելագործումը և դադարեցնում է դրա ճանաչումը .

10) ընդունում և գործողության մեջ է դնում Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության և Չափի և կշռի միջազգային բյուրոյի (ԿՉՄԲ/BIPM) ուղեցույցային փաստաթղթերի հայերեն տարբերակները:

Հոդված 11. Չափագիտության ազգային մարմինը

1. Չափագիտության ազգային մարմինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Չափագիտության ազգային մարմինն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում չափագիտության բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն:

2. Չափագիտության ազգային մարմինը՝

~~1) ստեղծում, պահպանում, կատարելագործում է մեծությունների միավորների ազգային չափանմուշները.~~

1) պահպանում է իր կազմում գտնվող ազգային չափանմուշի աշխատանքային կարգավիճակը, կատարելագործում է ազգային չափանմուշը, ինչպես նաև իրականացնում է ազգային չափանմուշի՝ չափագիտական հետևելիության ապահովումը մինչև միավորների միջազգային ՍԻ (SI) համակարգ.

2) ապահովում է իր կազմում գտնվող ազգային չափանմուշների տրամաչափարկում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտների չափանմուշների հետ.

3) իր իրավասության շրջանակներում անդամակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին.

4) սահմանում է ստանդարտ նմուշների վկայագրման կարգը և իրականացնում է ստանդարտ նմուշների վկայագրում.~~–~~, եթե չունի չափագիտական հետևելիությունը հավաստող փաստաթուղթ.

5) ***(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-235-Ն)***

6) իրականացնում է շահագործման մեջ գտնվող չափման միջոցների չափագիտական բնութագրերի փորձաքննություն.

7) իրականացնում է տրամաչափարկման աշխատանքներ չափագիտական հետևելիությունն ապահովելու նպատակով.

8) իրականացնում է չափումներ և օրենսդրական չափագիտության ոլորտում չափումների կատարման մեթոդիկաների(մեթոդների) չափագիտական վկայագրում.

9) ***(կետն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-235-Ն)***

10) հաստատում է չափման ~~միջոցների~~ միջոցի և ստանդարտ նմուշի տեսակը.

10.1) սահմանում է չափման միջոցի և ստանդարտ նմուշի տեսակի հաստատման սերտիֆիկատի գործողության ժամկետը.

11) վարում է տեսակը հաստատված չափման միջոցների և ստանդարտ նմուշների գրանցամատյանը.

~~12) մասնակցում է չափման միջոցների տրամաչափարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրման աշխատանքներին.~~

13) իրականացնում է չափման միջոցների ստուգաչափում և չափագիտական վկայագրում.

~~14) չափումների միասնականության ապահովման բնագավառում կազմակերպում և իրականացնում է ինչպես կադրերի ուսուցում, մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում ստուգաչափող մասնագետների ուսուցում, այնպես էլ վերոգրյալ ոլորտում տրամաչափարկման և փորձարկման լաբորատորիաների անձնակազմի վերապատրաստում, հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր.~~

14) չափագիտության ոլորտում կազմակերպում և իրականացնում է ինչպես կադրերի ուսուցում, մասնագիտացում, վերապատրաստում, օրենսդրական չափագիտության ոլորտում ստուգաչափում իրականացնող մասնագետների ուսուցում, այնպես էլ չափագիտության ոլորտում համապատասխանության գնահատման մարմինների անձնակազմի վերապատրաստում, հավատարմագրման փորձագետների ուսուցում և շնորհում է համապատասխան վկայագրեր.

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված իրավական ակտերով նախատեսված տեխնիկական կանոնակարգերի նախագծերի չափագիտական փորձաքննություն:

16) իրականացնում է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման ու հարգադրոշմման գործունեության համար օգտագործվող սարքավորումների փորձաքննություն.

17) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում չընդգրկված չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը՝ տեսակի հաստատման ժամանակ.

18) անհրաժեշտության դեպքում ստեղծում է չափագիտության խորհուրդ և սահմանում նրա գործունեության կարգը .

19) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

(11-րդ հոդվածը լրաց. 30.04.13 ՀՕ-42-Ն, փոփ., լրաց. 17.12.14 ՀՕ-235-Ն, խմբ. 01.03.17 ՀՕ-76-Ն)

Հոդված 12. Կառավարման խորհուրդը

1. Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Չափագիտության ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է ~~7 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 4 պետական կառավարման մարմինների և 3 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից:~~ Խորհրդի նախագահից, 10 անդամներից՝ չափագիտության գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5 պետական կառավարման համակարգի մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

~~2. Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:~~

3. Չափագիտության ազգային մարմնի տնօրենը Խորհրդի քարտուղարն է և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա է քվեարկության ձայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

5. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

6. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար՝ առցանց եղանակով: Հեռավար նիստերի ժամանակ քվեարկությունը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցման միջոցներով:

7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

8. Խորհուրդը՝

1) ընդունում է որոշումներ Չափագիտության ազգային մարմնի գործունեության պլանավորման և գործունեության հետ կապված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ.

2) հաստատում է Չափագիտության ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը~~.~~ և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները.

3) դիմում է շահագրգիռ կողմերին՝ տարբեր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու առաջարկով.

4) քննարկում է Չափագիտության ազգային մարմնի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ներկայացնում է առաջարկություն՝ այն ~~լիազոր պետական կառավարման~~ լիազորված պետական կառավարման համակարգի մարմնի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ.

5) քննարկում, հաստատում և հրապարակում է Չափագիտության ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները.

6) ապահովում է չափագիտության ազգային համակարգի համապատասխանությունն ազգային տնտեսության շահերին, նյութատեխնիկական բազայի ներկա վիճակին և գիտատեխնիկական առաջընթացին.

7) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային չափագիտական աշխատանքները՝ այդ աշխատանքների կատարմանը ներգրավելով շահագրգիռ կողմերին և համապատասխան փորձագետների.

~~8) իրականացնում է Չափագիտության ազգային մարմնի կանոնադրությամբ Խորհրդին վերապահված այլ լիազորություններ:~~

8) չափագիտության լիազոր մարմնին ներկայացնում է առաջարկություններ միջազգային լավագույն փորձին ներդաշնակ Հայաստանի Հանրապետությունում չափագիտության ոլորտում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարության վերաբերյալ:

Գ Լ ՈՒ Խ 4

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

~~Հոդված 13.~~ ~~Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտները~~

-

~~1. Օրենսդրական չափագիտության պահանջները տարածվում են այն չափումների վրա, որոնց արդյունքներն օգտագործվում են՝~~

~~1) գնորդի և վաճառողի միջև առևտրային գործողություններում, արտադրողի և իրացնողի միջև հաշվարկներում.~~

~~2) առողջապահության բնագավառում.~~

~~3) շրջակա միջավայրի պահպանության, աշխատավայրում անվտանգության ապահովման և պատահարների կանխման ժամանակ.~~

~~4) ճանապարհային երթևեկության վերահսկման և տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը գնահատելու ժամանակ.~~

~~5) պետական կառավարման մարմինների, արբիտրաժի, դատախազության, դատական մարմինների հանձնարարությամբ կիրառվող չափումների ժամանակ.~~

~~6) համապատասխանության գնահատման նշանակված մարմիններում.~~

~~7) ռազմական բնագավառում.~~

~~8) ծառայությունների մատուցման ոլորտում:~~

~~2. Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~(13-րդ հոդվածը լրաց. 17.12.14 ՀՕ-235-Ն, 26.05.21 ՀՕ-230-Ն)~~

-

~~Հոդված 14.~~ ~~Օրենսդրական չափագիտության գործառույթները~~

-

~~1. Օրենսդրական չափագիտության գործառույթներն են՝~~

~~1) չափման միջոցների տեսակի հաստատումը.~~

~~2) չափման միջոցների ստուգաչափումը.~~

~~3) չափագիտական հսկողությունը.~~

~~4) չափման միջոցների չափագիտական փորձաքննությունը:~~

~~(14-րդ հոդվածը լրաց. 17.12.14 ՀՕ-235-Ն)~~

-

~~Հոդված 15.~~ ~~Չափման միջոցների փորձարկումը և տեսակի հաստատումը~~

-

~~1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտում կիրառվող և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթակա են տեսակի հաստատման:~~

~~2. Չափման միջոցի տեսակի հաստատված լինելը հավաստվում է չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատով, որի ձևը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը:~~

~~3. Չափման միջոցի տեսակի հաստատումն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը՝ փորձարկումների արդյունքների հիման վրա:~~

~~4. Չափման միջոցների փորձարկումներն իրականացվում են դրանց չափագիտական բնութագրերի հետազոտման, ստուգաչափման մեթոդի և միջստուգաչափական ժամանակամիջոցի որոշման նպատակով:~~

~~5. Չափման միջոցների փորձարկումների և տեսակի հաստատման կարգը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության սահմանած ուղեցույցներով:~~

~~6. Սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունեցող չափման միջոցները, դրանց ներկայացվող պահանջները և շուկայահանման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~(15-րդ հոդվածը խմբ.~~ ~~30.04.13 ՀՕ-42-Ն, լրաց.~~ ~~17.12.14 ՀՕ-235-Ն)~~

-

~~Հոդված 16.~~ ~~Չափման միջոցների ստուգաչափումը~~

-

~~1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթակա են ստուգաչափման:~~

~~2. Չափման միջոց կիրառող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են իրենց կողմից առևտրային նպատակներով կիրառվող Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթարկել ստուգաչափման:~~

~~3. Չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը սահմանվում է չափման միջոցի տեսակի հաստատման ժամանակ:~~

~~4. Չափման միջոցների ստուգաչափում իրականացնող մասնագետները ենթակա են վկայագրման՝ որպես ստուգաչափող:~~

~~5. Չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացվում են ստուգաչափման դրոշմի արտատիպով չափման միջոցի վրա և (կամ) անձնագրի վրա, և (կամ) տրվում է ստուգաչափման վկայական:~~

~~6. Ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում է ստուգաչափման դրոշմի արտատիպը և տալիս է ծանուցագիր չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին:~~

~~7. Չափման միջոցների ստուգաչափման կազմակերպման և իրականացման կարգը սահմանում է չափագիտության լիազոր մարմինը՝ Օրենսդրական չափագիտության միջազգային կազմակերպության ուղեցույցների հիման վրա:~~

~~8. Չափագիտության ազգային մարմինը չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու համար ծանուցում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:~~

~~9. Ստուգաչափման դրոշմը համարվում է անվավեր, եթե այն վնասված է:~~

~~10. Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման միջոցների շահագործումն արգելվում է:~~

~~11. Չափման միջոցների ստուգաչափում, բացառությամբ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված իրավաբանական անձինք:~~

~~(16-րդ հոդվածը խմբ. 30.04.13 ՀՕ-42-Ն, 17.12.14 ՀՕ-235-Ն, 26.05.21 ՀՕ-230-Ն)~~

Հոդված 17. Չափման միջոցների, ինչպես նաև չափածրարված արտադրանքի և չափիչ սրվակների չափագիտական հսկողությունը

(հոդվածն ուժը կորցրել է 17.12.14 ՀՕ-235-Ն)

Հոդված 18. Ներմուծված չափման միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը
(վերնագիրը փոփ. 17.12.14 ՀՕ-235-Ն)

1 . Սույն օրենքի ~~13-րդ հոդվածի 2-րդ մասով~~ 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ցանկի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման և արտահանման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը Պետական եկամուտների կոմիտեն տրամադրում է Չափագիտության ազգային մարմնին և տեսչական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

(18-րդ հոդվածը փոփ. 17.12.14 ՀՕ-235-Ն, խմբ. 26.05.21 ՀՕ-230-Ն)

~~Հոդված 19. Չափման միջոցների փորձաքննությունը~~

-

~~1. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացվում է դատարանի, դատախազության, արբիտրաժի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի, սպառողների և նրանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների գրավոր առաջարկով կամ պահանջով՝ չափման միջոցների չափագիտական բնութագրերը որոշելու նպատակով:~~

~~2. Չափման միջոցների փորձաքննությունն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը:~~

~~(19-րդ հոդվածը լրաց., խմբ. 26.05.21 ՀՕ-230-Ն)~~

~~Գ Լ ՈՒ Խ 5~~

-

~~ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ~~

Գ Լ ՈՒ Խ 5

ՉԱՓԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

~~**Հոդված 20. Չափագիտական վերահսկողության նպատակները, խնդիրները և տեսակները**~~

-

Հոդված 20. Չափագիտական վերահսկողության նպատակները և խնդիրները

1. Չափագիտական վերահսկողության նպատակներն են ~~չափումների միասնականության ապահովման բնագավառը կանոնակարգող օրենքով~~ սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված չափագիտական կանոնների և նորմերի խախտումների կանխարգելումը և դրանց բացահայտումն ու վերացումը:

2. Չափագիտական վերահսկողությունը տարածվում է սույն օրենքի ~~13-րդ հոդվածով սահմանված օրենսդրական չափագիտական ոլորտների վրա:~~ 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված օրենսդրական չափագիտության տարածման ոլորտների, ինչպես նաև սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պահանջների վրա:

3. Չափագիտական վերահսկողության խնդիրներն են՝

1) տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցների կիրառումը.

2) չափումների կատարման վկայագրված ~~մեթոդիկաների~~ մեթոդիկայի (մեթոդի) առկայությունը.

~~3) չափումների միասնականության ապահովման բնագավառում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը:~~

3) չափագիտության ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը:

(20-րդ հոդվածը խմբ. 01.03.17 ՀՕ-76-Ն, 26.05.21 ՀՕ-230-Ն)

~~**Հոդված 21. Տեսչական մարմինը**~~

Հոդված 21. Չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը և տեսչական մարմնի ծառայողը

(վերնագիրը խմբ. 26.05.21 ՀՕ-230-Ն)

1. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած տեսչական մարմինը չափագիտական վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով.

1) տեսակը չհաստատված չափման միջոցների շուկայահանման ~~և (կամ)~~ կամ շահագործման նկատմամբ.

2) չստուգաչափված չափման միջոցների շուկայահանման ~~և (կամ)~~ կամ շահագործման նկատմամբ .

3) տեսակը հաստատված և ստուգաչափված, սակայն չափագիտական կանոններին և նորմերին չհամապատասխանող չափման միջոցների շուկայահանման ~~և (կամ)~~ կամ շահագործման նկատմամբ .

4) չափումների կատարման վկայագրված մեթոդիկաների(մեթոդների) նկատմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված վերահսկողության շրջանակներում լիազորված տեսչական մարմինը չափման միջոցի՝ չափագիտական կանոններին և նորմերին համապատասխանությունը որոշելիս (ստուգելիս) օգտագործում է ~~աշխատանքային չափանմուշ, աշխատանքային չափանմուշի օգտագործման անհնարինության դեպքում սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կարգով հրավիրում է Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի և (կամ) պահանջում է չափման միջոցի փորձաքննության իրականացում:~~ ստուգաչափված չափման միջոց (չափագիտական հետևելիությունն ապահովող), համապատասխան չափման միջոցի օգտագործման անհնարինության դեպքում տեսչական մարմինը կարող է դիմել Չափագիտության ազգային մարմնին վերջինիս չափման միջոցը ժամանակավորապես օգտագործելու համար՝ համապատասխան փորձագետի տրամադրմամբ, փորձաքննություն անցկացնելու խնդրանքով:

3. Վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ~~կարգադրագրի~~ ~~ձևը~~ կարգադրագրի, չափման միջոցի շահագործումն արգելող կապարակնիքի և կապարակնքման ակտի ձևերը հաստատում է տեսչական մարմնի ղեկավարը:

4. Տեսչական մարմնի ծառայողը՝

1) կարգադրագրով արգելում է չափման միջոցների չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող խմբաքանակի իրացումը.

2) ստուգման ընթացքում արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ ըստ անհրաժեշտության կապարակնքում է չափման միջոցը՝ կազմելով կապարակնքման ակտ և արգելելով վերջինիս շահագործումը

3) ստուգում է տեսակը հաստատված, ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցի համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին, իսկ ստուգման ընթացքում համապատասխան սարքերի բացակայությամբ պայմանավորված գրավոր հրավիրում է նաև Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի.

4) չափման միջոցների նկատմամբ վերահսկողության շրջանակներում իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված փաստաթղթերի արժանահավատությունը և փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին ստուգելու նպատակով կարող է տեսանկարահանել կամ լուսանկարել

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

(21-րդ հոդվածը խմբ. 01.03.17 ՀՕ-76-Ն, 26.05.21 ՀՕ-230-Ն)

~~**Հոդված 22. Տեսչական մարմնի ծառայողի իրավասությունները**~~
~~***(վերնագիրը փոփ. 01.03.17 ՀՕ-76-Ն, 26.05.21 ՀՕ-230-Ն)***

-

~~1. Տեսչական մարմնի ծառայողը՝~~

~~1) կարգադրագրով արգելում է չափման միջոցների չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող խմբաքանակի իրացումը.~~

~~1. 1) ըստ անհրաժեշտության ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա տրված կարգադրագրի հետ մեկտեղ կապարակնքում է (դրոշմում է) չափման միջոցը.~~

~~2) ստուգում է ստուգաչափված կամ վկայագրված չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին ու նորմերին՝ անհրաժեշտության դեպքում հրավիրելով Չափագիտության ազգային մարմնի ներկայացուցչի.~~

~~3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:~~

~~***(22-րդ հոդվածը փոփ. 01.03.17 ՀՕ-76-Ն, փոփ., լրաց., խմբ. 26.05.21 ՀՕ-230-Ն)***~~

-

Հոդված 23. Պետական տեսուչի պատասխանատվությունը

(հոդվածն ուժը կորցրել է 01.03.17 ՀՕ-76-Ն)

Հոդված 24. Չափագիտական կանոնների և նորմերի խախտման դեպքում կիրառվող կարգադրագրերը

1. Կարգադրագիրը տեսչական մարմնի ղեկավարի կամ ծառայողի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգման ընթացքում կամ իրականացված ստուգման արդյունքներով արձանագրված իրավախախտման հիման վրա իրենց իրավասության սահմաններում ընդունված ակտ է, որն ուղղված է՝

1) տեսակը չհաստատված կամ հաստատված տեսակին կամ չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող չափման միջոցների իրացման արգելմանը՝ մինչև հայտնաբերված խախտումների վերացումը.

~~2) չափման միջոցների շահագործման արգելմանը, եթե դրանք չեն անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում, կամ դրանց տեսակը հաստատված չէ, կամ դրանք չեն համապատասխանում հաստատված տեսակներին.~~

2) չափման միջոցի շահագործման արգելմանը, եթե այն չի անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում կամ տեսակը հաստատված չէ կամ չի համապատասխանում հաստատված տեսակին կամ չի համապատասխանում չափագիտական կանոներին և նորմերին.

3) չափագիտական կանոններին ու նորմերին չհամապատասխանող չափման միջոցների խմբաքանակի իրացման արգելմանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգադրագրերով սահմանվում է հայտնաբերված խախտումների վերացման ժամկետ՝ համաձայնեցված ~~տնտեսավարող սուբյեկտի~~ իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ հետ:

~~3. Տնտեսավարող սուբյեկտը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում կարգադրագրի կատարման մասին տեղյակ պահել տեսչական մարմնին:~~

3. Իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը պարտավոր է կարգադրագրով սահմանված ժամկետում կարգադրագրի կատարման մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել տեսչական մարմնին:

4. Կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում տեսչական մարմնին գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն ~~օրենքով~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.1 . Կարգադրագրի պահանջները սահմանված ժամկետում չպահպանելը ~~և (կամ)~~ կամ առանց տեսչական մարմնի գրավոր համաձայնեցման չափագիտական վերահսկողություն իրականացնող ծառայողի կողմից դրված կապարակնիքը (դրոշմը) վնասելը կամ հանելը առաջացնում է պատասխանատվություն՝ ~~օրենքով~~ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

~~5. Կարգադրագրերով նախատեսված պատասխանատվության միջոցները վերացնում է տեսչական մարմնի ղեկավարը՝ տնտեսավարող սուբյեկտի դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա:~~

5 . Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դիմումով կարգադրագրերի կատարման ստուգման դրական արդյունքների հիման վրա կամ տեսչական մարմին կարգադրագրի կատարումը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը 10 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է չափման միջոցի իրացումը կամ շահագործումն արգելելու մասին կարգադրագիրը և գրավոր ծանուցում իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:

(24-րդ հոդվածը խմբ., փոփ. 01.03.17 ՀՕ-76-Ն, խմբ., փոփ., լրաց. 26.05.21 ՀՕ-230-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 25. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար

~~1. Սույն օրենքի դրույթները խախտող անձինք կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:~~

1. Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 7

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 26. Չափումների միասնականության ապահովման աշխատանքների ֆինանսավորումը

1. Պարտադիր պետական ֆինանսավորման ենթակա են՝

1) ազգային չափանմուշների ստեղծումը (ձեռքբերումը), կատարելագործումը, պահպանումը, սպասարկումը.

2) մեծությունների միավորների ազգային չափանմուշների բաղդատումը միջպետական կամ միջազգային չափանմուշների հետ.

3) հիմնարար և կիրառական կարևոր հետազոտական աշխատանքների կատարումը չափագիտության բնագավառում.

4) չափումների միասնականության ապահովման հարցերով նորմատիվ իրավական ակտերի մշակումը.

5) Չափագիտության ազգային մարմնի վերազինման համար սարքավորումների մշակումը, ձեռքբերումը և պահպանումը.

6) չափագիտության միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին անդամավճարները.

7) չափագիտության բնագավառի պետական գիտատեխնիկական ծրագրերի կատարման հետ կապված աշխատանքները:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված աշխատանքների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին՝ որպես դրամաշնորհ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն հոդվածով նախատեսված աշխատանքների ֆինանսավորումը կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

~~**Հոդված 27. Չափագիտական աշխատանքների և մատուցված ծառայությունների համար վճարումը**~~

-

~~1. Չափագիտության ազգային մարմնի կողմից իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցված ծառայությունների համար վճարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով:~~

~~2. Չափման միջոցների ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ մինչև 35000 դրամի սահմաններում՝ լիազորված մարմնի սահմանած գներին համապատասխան:~~

~~3. Պատվիրատու հանդես եկող տնտեսավարող սուբյեկտը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը:~~

~~***(27-րդ հոդվածը փոփ. 17.12.14 ՀՕ-235-Ն)***~~

Հոդված 27. Չափագիտական աշխատանքների և մատուցված ծառայությունների համար վճարումը

1. Օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում չափման միջոցի ստուգաչափման, չափագիտական վկայագրման աշխատանքները ենթակա են վճարման՝ տվյալ աշխատանքներն իրականացնող մարմնի կողմից սահմանած գներին համապատասխան, բացառությամբ հանրային ծառայությունները կարգավորող ոլորտների, որոնցում կիրառվող չափման միջոցների ստուգաչափման գները սահմանվում են լիազոր մարմնի կողմից:

2. Պատվիրատու հանդես եկող իրավաբանական անձը և անհատ ձեռնարկատերը փոխհատուցում է չափագիտական աշխատանքներ կատարողին չափագիտական աշխատանքների հետ կապված աշխատակիցների գործուղման, ստուգաչափման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումների և միջոցների՝ մինչև աշխատանքների կատարման վայրը փոխադրման ծախսերը:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28. Օրենքի ուժի մեջ մտնելը

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 17-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:~~

~~2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 26-ի ՀՕ-83-Ն օրենքը:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) տասներկու ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը.

2) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված ժամկետին հաջորդող հինգ ամսվա ընթացքում չափագիտության լիազոր մարմինը հաստատում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: